Premier Foods

Հարգելի գործընկեր,

«Նեստլե» ընկերությունների խումբը բարձր է գնահատում իր գործընկերների հետ ձևավորված հարաբերությունները և շարունակում է իրականացնել երկարաժամկետ համագործակցության ռազմավարությունը:

Սույն գրությամբ տեղեկացնում ենք, որ

«Նեստլե» ընկերությունների խումբը, որը իր արտադրանքը իրացնում է «Պրեմիեր Ֆուդս» ՍՊԸ-ի միջոցով (պաշտոնական ներմուծողը Հայաստանի Հանրապետությունում), ինքնակամ կերպով հետ է կանչում մանկական սննդի արտադրանքի որոշակի խմբաքանակներ՝ կապված արտաքին մատակարարից ստացված հումքի որակի վերահսկման միջոցառումների խստացման հետ:

Ինքնակամ հետկանչը վերաբերում է մանկական սննդի արտադրանքի սահմանափակ քանակությանը՝ չոր, արագ լուծվող կաթնային և կաթնաթթվային խառնուրդներ, ինչպես նաև ամինաթթուների հիման վրա պատրաստված բուժական դիետիկ չոր խառնուրդներ հետևյալ խմբաքանակներից.

NAN 1 OPTIPRO – 51500346AA, 51740346AC, 51510346AA, 52190346BA, 52200346BA

NAN 2 OPTIPRO – 51420017C5, 5200167811, 5220167821, 5240167821, 5256167811

NAN առանց լակտոզայի – 51400346AA

PreNAN – 52560346AA

NAN SUPREME 0-12 – 52790742C1, 52750742F1

Հետկանչը իրականացվում է որպես նախազգուշական միջոց և հանդիսանում է «Նեստլե» ընկերության կողմից իրականացվող մանկական սննդի որոշ խմբաքանակների գլոբալ ինքնակամ հետկանչման միջոցառումների մաս՝ կապված արտաքին մատակարարից ստացված հումքում (արախիդոնաթթու) cereulid տոքսինի առկայության հնարավոր ռիսկի հայտնաբերման հետ:

Չնայած տվյալ բաղադրիչի նվազագույն պարունակությանը և cereulid տոքսինի պարունակության նորմավորման բացակայությանը Հայաստանում, հնարավոր ռիսկերը նվազեցնելու նպատակով «Նեստլե» ընկերությունը գործընկերների հետ համատեղ սկսել է միջոցառումներ՝ մանկական սննդի արտադրանքի սահմանափակ խմբաքանակների ինքնակամ հետկանչման համար՝ որպես նախազգուշական քայլ:

Գնորդները, ովքեր ձեռք են բերել նշված խմբաքանակների արտադրանքը, կարող են վերադարձնել այն կարգով, որը կհաստատվի «Նեստլե» ընկերության կողմից:

Հետկանչը չի վերաբերում այլ խմբաքանակների արտադրանքին և ոչ մի այլ մանկական սննդի արտադրանքին, որոնք ներկայացված են «Նեստլե» ընկերության կողմից Հայաստանում

Premier Foods

«Պրեմիեր Ֆուդս» ՍՊԸ-ն խնդրում է Ձեզ սահմանափակել մանկական սննդի այն ապրանքների իրացումը, որոնք Ձեզ առաքվել են կից ներկայացված խմբաքանակներով , և պատրաստել դրանք վերադարձի համար:

Այս կապակցությամբ խնդրում ենք Ձեզ.

Գնահատել Ձեզ և Ձեր հաճախորդներին առաքված նշված ապրանքների քանակը, ինչպես նաև ապրանքների մնացորդները Ձեր պահեստներում, առևտրային կետերում և Ձեր հաճախորդների պահեստներում, և ստուգման արդյունքների մասին տեղեկացնել հնարավորինս օպերատիվ:

Շնորհակալություն համագործակցության և ըմբռնման համար:

Հարցերի դեպքում կարող եք դիմել Միքայել Գրիգորյանին հեռ. +374 94 44-16-94

Հարգանքով,

Գագիկ Դանիելյան

Գլխավոր տնօրեն